

Առաջին փուլ

GIS (USZ) հիմունքներ և նախագծային ուսուցում

Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (Geographic Information Systems) տարածական տվյալների բազաների ստեղծման, տարածաժամանակային վերլուծությունների և դրանց վիզուալիզացիայի համակարգ է, որն օգտագործվում է ժամանակակից տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Այն լայն կիրառում ունի կառավարման, ապահովագրության, մարկետինգի, ենթակառուցվածքների (տրանսպորտ, էլեկտրամատակարարում, գազամատակարարում, հեռահաղորդակցություն), գյուղատնտեսության, ջրային ռեսուրսների կառավարման ոլորտներում:

Ուսուցումն իրականացավելու է նախագծային տարբերակով՝ ծրագրի անմիջական կիրառական օգտագործմամբ: GIS հիմունքների ուսուցմանը զուգընթաց կտրվի ուսումնական նախագծի մեկնարկ, որը կունենա անհատական բնույթ: Յուրաքանչյուր մասնակից կկառուցի իր նախագիծն՝ օգտագործելով յուրաքանչյուր դասի ընթացքում ձեռք բերած հմտությունները:

Դասընթացը կվարի GIS, աղետների ռիսկերի կառավարման և ֆիզիկական աշխարհագրության մասնագետ Ստեփան Խաչատրյանը:

Դասընթացի առաջին փուլը կունենա հետևյալ բովանդակությունը՝

1. GIS համակարգի ներկայացում և նախագծերի բաշխում:
2. ArcGIS ներկառուցվածքային համակարգ: Բաղադրիչներն ու օգտագործման հիմունքները
3. Տարածական տվյալների մուտքագրում և պահպանում:
4. Տարածական և հատկանշային ընտրանքների կատարում: Դրանց կիրառումը նախագծերում:

Տևողությունը 20 ժամ՝ շաբաթական 2 պարապունք 2.5 ժամով:

Արժեքը՝ 100000 ՀՀ դրամ